ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 3
"26." .....2026թ. N 1278-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԴԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ (ՕԴԱՅԻՆ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ) ԵԼՔԻ ՀԱՄԱՐ ՆՎԱԶՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով «Աէրոֆլոտ՝ ռուսական ավիաուղիներ» բաց բաժնետիրական ընկերության 2026 թվականի ապրիլի 7-ի թիվ 61.2-05 գրությունը և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համապատասխան ոլորտը համակարգող նախարարի տեղակալի 2026 թվականի մայիսի 18-ի միջնորդությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետությունից օդային տրանսպորտի միջոցով ֆիզիկական անձանց (օդային ուղևորների) ելքի համար նվազման կարգով պետական տուրքի վճարումից 2026 թվականի ապրիլի 7-ից մինչև 2028 թվականի հոկտեմբերի 11-ը ներառյալ ժամկետով ազատել «Աէրոֆլոտ՝ ռուսական ավիաուղիներ» բաց բաժնետիրական ընկերությանը՝ Երևան (UDYZ)-Կրասնոդար (KRR) ուղղությամբ:
2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի մամուլի քարտուղարին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի տեղադրումը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պաշտոնական կայքում:

3. Օդային տրանսպորտի քաղաքականության և թռիչքների թույլտվությունների վարչության պետի պարտականությունները կատարողին՝ ապահովել սահմանված կարգով հրամանի օրինակի տրամադրումը «Աէրոֆլոտ՝ ռուսական ավիաուղիներ» բաց բաժնետիրական ընկերությանը և Քաղաքացիական ավիացիայի կոմիտեին՝ ստորագրման օրվանից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում:

26.05.2026

X

ԱՐՄԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

Подписано: SIMONYAN ARMEN 4003890647

ՆԱԽԱՐԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ՍԻՄՈՆՅԱՆ**

ք. Երևան